

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 23

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

17.08.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Խաչատրյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Ղուկասյանը - մարզպետի տեղակալ
- Ս.Սարուխանյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - գլխավոր քարտուղար
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի տեղակալ
- Ա.Բեջանյանը, Ս.Լամբարյանը, Ա.Մատինյանը, Ա.Հարությունյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերդյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Ա.Եղիազարյանը, Հ.Մկրտչյանը, Ա.Դեմիրճյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Հ.Ղամբարյանը - մարզպետի խորհրդական
- Մ.Կիրակոսյանը - մարզպետի օգնական
- Գ.Սաղաթեյանը -մարզպետի օգնական

Օր ա կ ար գ ու մ`

- 1.«Շանթ-2018» զորավարժությունների արդյունքների մասին
/Հրանտ Մարգարյան /
/Զեկ. Ս. Ղուբաթյան/
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
/Զեկ. Ն. Սարգսյան/
- 3.Պետական գերատեսչությունների կողմից տրված հանձնարարականների մասին
/Զեկ. Ա. Խաչատրյան, Ա. Ղուկասյան, Ս. Սարուխանյան/
4. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
/Զեկ. Ա. Բեջանյան/
- 5.Գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին:
/Զեկ. Գ. Հակոբյան/
6. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Խաչատրյանին, Ա.Ղուկասյանին, Ս.Սարուխանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին և ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել և հսկողություն սահմանել համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման եռամսյակային պլանային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ, ինչպես նաև ներկայացնել առաջարկություններ հարկային պարտավորությունները ոչ պատշաճ կատարող անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Անհրաժեշտ վերլուծություններ կատարել և վերհանել «Շանթ-2018» զորավարժությունների ընթացքում ի հայտ եկած թերությունները ու բացթողումները և միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ա.Մատինյանին՝

Համատեղ քննարկումներ իրականացնել և ներկայացնել առաջարկություններ «Անկախության տոնի» միջոցառումների կազմակերպման և մասնակցության վերաբերյալ:

17/09/2018

X 

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ